

**Ֆվարժական հավաքներ հայտարարելու և դրա
ապահովման համար ռազմատրանսպորտային
պարտակա–նուլթյուններ ունեցող մարմինների
տրանսպորտային միջոցները ներգրավելու մասին:
Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2022 թվականի N - Ն

**ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ
ՌԱԶՄԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով §2ինվորական ծառայության և զինծառայողի
կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ
հոդվածի 2-րդ և §Պաշտպանության մասին՝ Հայաստանի Հանրապետության
օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայտարարել պահեստագործի առաջին խմբի առաջին և երկրորդ
կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական
կազմերի պահեստագործայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս
ժամկետով՝ 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը:
2. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 1400 քաղաքացու, որոնցից
1205-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 65-ը՝ ավագ
ենթասպայական կազմի, 130-ը՝ սպայական կազմի
պահեստագործայիններ՝ համագործային լճոտոհրաձգային, կապի,
հետախուզական, ինժեներական, հրթիռահրետանային
մասնագիտություններով:
3. Վարժական հավաքների ապահովման համար, երեք ամիս ժամկետով,
2022 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը,

ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավել մինչև 136 միավոր տրանսպորտային միջոց՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորայինների ռազմական ունակությունների կատարելագործման, մասնագիտական վերապատրաստման և պատրաստման, բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման, կնքված պայմանագրի համաձայն մարտական հերթապահության ներգրավման նպատակով:
5. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին վարժական հավաքներ անցկացնելու ժամկետում անհրաժեշտությունը վերանալու դեպքում վարժական հավաքներին ներգրավված քաղաքացիներին ժամկետից շուտ արձակել պահեստազոր, իսկ ներգրավված տրանսպորտային միջոցները վերադարձնել ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող համապատասխան մարմիններին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

N _____-ի
- Ն որոշման

ՑԱՆԿ

**ՌԱԶՄԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ
ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ**

Հ/հ	Տրանսպորտային միջոցի տեսակը	Քանակը (միավոր)	Ծանոթ գրույ
1.	Մարդատար	4	
	Կողավոր (անձնակազմ տեղափոխելու համար)	72	
3.	Կողավոր	12	
	Կողավոր (ոչ պակաս 5 տոննայից)	28	
5.	Ուղևորաբեռնատար բարձր անցանելիությամբ	8	
6.	Սանիտարական	12	
	Ընդամենը	136	